ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 30.04.2019թ.
ժամը 15 ⁰⁰

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, ԳԱՊ՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,
գնահատողներ՝
- ՀՀ ՋՈՒ ՍՎ ՀՀԱ ծառայության հաշվառման բաժնի պետ փոխգնդապետ Ի. Գալստյան,
- ՀՀ ՋՈՒ ՍՎ ՀՀՍԾ Շ և Պ բաժնի սպա՝ մայոր Հ. Զաքարյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՀԱ, ՋՏ և ԱՏ միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Ն. Զախալյան,
Գնումները համակարգող՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի տեղակալ Ա.Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 **«Վիէյչ գրուպ» ՍՊԸ**-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը ներկայացրել է, սակայն որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝
- 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝
1) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.
2) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:
Սակայն վերջինիս կողմից ներկայացվել է միայն Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը:
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ շտկված տարբերակը ուղարկել a.baghramyan@mil.am էլեկտրոնային հասցեին:
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

07.05.2019թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Սահմանված ժամկետում **«Վիէյչ գրուպ» ՍՊԸ**-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) ներկայացրեց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնց հետազոտման արդյունքում պարզ դարձավ որ մասնակիցը որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տախտակի և գերանի (брус) մատակարարման պայմանագրեր, ինչի հետ կապված սույն ընթացակարգի շրջանակներում նախքան հայտերի բացումը այլ մասնակցի կողմից ներկայացվել էր պարզաբանում կապված տախտակի մատակարարման վերաբերյալ ինչի կապակցությամբ գնահատող հանձնաժողովը արդեն իսկ ուներ հրապարակված պարզաբանում armeps.am համակարգով, համաձայն որի տախտակի մատակարարումը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր:

Քանի որ մասնակցից ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն արդեն իսկ պահանջվել էր որակավորման փաստաթղթերի շտկում, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները որոշեց **«Վիէյչ գրուպ» ՍՊԸ**-ի (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) որակավորման հատկանիշները «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով գնահատել ոչ համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժած չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել **«Յունիք Լայն» ՍՊԸ**-ն (համատեղ գործունեության պայմանագրով Ա/Ձ Բաղդո Հակոբյանի հետ):

Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել ոչ ուշ քան, 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող,	Ի. Գալստյան
Գնահատող	Հ. Զաքարյան
Գնահատող	Ն. Զախալյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան